



**Գրանթ Թորնթոն ՓԲԸ**  
ՀՀ, ք. Երևան 0012  
Վաղարշյան 8/1

Հ. + 374 10 260 964  
Ֆ. + 374 10 260 961

**Grant Thornton CJSC**  
8/1 Vagharshyan Str.  
0012 Yerevan, Armenia

T + 374 10 260 964  
F + 374 10 260 961

[www.gta.am](http://www.gta.am)

## Անկախ աուդիտորի եզրակացություն

«Առաջին հիփոթեքային ընկերություն» ՈՒՎԿ ՍՊԸ-ի մասնակիցներին.

Մենք ստուգել ենք «Առաջին հիփոթեքային ընկերություն» ՈՒՎԿ ՍՊԸ-ի (այսուհետ՝ «Կազմակերպություն») կից ներկայացվող համառոտ ֆինանսական հաշվետվությունների (որոնք ներառում են 2010թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի մասին համառոտ հաշվետվությունը, ինչպես նաև նույն ամսաթվին ավարտված տարվա համար համապարփակ ֆինանսական արդյունքների, սեփական կապիտալում փոփոխությունների և դրամական միջոցների հոսքերի մասին համառոտ հաշվետվությունները) համապատասխանությունը Կազմակերպության՝ 2010թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ և նույն ամսաթվին ավարտված տարվա ամբողջական ֆինանսական հաշվետվությունների հետ՝ համաձայն Աուդիտի միջազգային ստանդարտների:

Կազմակերպության ղեկավարությունը պատասխանատու է սույն ֆինանսական հաշվետվությունները պատրաստելու և արժանահավատորեն ներկայացնելու համար: Մեր պատասխանատվությունն է ստուգել սույն համառոտ ֆինանսական հաշվետվությունների համապատասխանությունը վերոհիշյալ ամբողջական ֆինանսական հաշվետվությունների հետ:

Ի հավելումն, մենք աուդիտի ենք ենթարկել Կազմակերպության 2010թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ և նույն ամսաթվին ավարտված տարվա ամբողջական ֆինանսական հաշվետվությունները՝ պատրաստված համաձայն ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների, և 12 մայիսի 2011թ. ամսաթվով թվագրված մեր եզրակացությունում մենք ներկայացրել ենք դրական եզրակացություն ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ:

Մեր կարծիքով, կից ներկայացվող համառոտ ֆինանսական հաշվետվությունները ճշգրտորեն են ստացվել Կազմակերպության ամբողջական ֆինանսական հաշվետվություններից:

2010թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Կազմակերպության ֆինանսական վիճակի, գործունեության արդյունքների, ինչպես նաև աուդիտի շրջանակների վերաբերյալ ավելի լավ պատկերացում կազմելու համար համառոտ ֆինանսական հաշվետվությունները պետք է դիտարկել դրանց ստացման համար հիմք հանդիսացող ֆինանսական հաշվետվությունների, ինչպես նաև դրանց վերաբերյալ մեր աուդիտորական եզրակացության հետ համատեղ:

Գագիկ Գյուլբուդադյան  
Տնօրեն/բաժնետեր

Արուսյակ Թեյլան  
Աուդիտոր

12 մայիսի, 2011թ.  
ք. Երևան

